

«ՄԱՅՐԵՆԻ ՊԱՇՏՊԱՆ» ԾԱՐՔԻՑ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՁԵՐ ՄՈՒՏՔԸ ՄԵԾ ԿՅԱՆՔ



Վերջին գանգ... Ով չի հուզվում, ով չի հիշում այն քաղցր ու անհոգ պահը, երբ քեզինց շատ թանկ ու անդարձ պոկվում է մանկությունդ ու պատանեկությունդ...

Ժամանակի թելադրանքով մի քիչ անվարան, մի քիչ հուզված երիտասարդությանն ասում ես ողջո՞ւյն, կյանքին ասում ես եկա գտնելու իմ տեղը... Եվ հրաժեշտի արցունքների միջից ծայրում ես ընկերներին, ուսուցիչներին, դրպրոցիդ՝ պատանորեն անփույթ ու ապագայի անգիտությամբ բախտավոր: Ես ճանաչում եմ մի մանկավարժի, ով Հայաստանում երկար տարիներ դպրոցի տնօրեն աշխատելուց հետո, ճակատագրի բերումով հայտնվել էր Ռոստովում: Նա ամեն սեպտեմբերի 1-ին և մայիսի 25-ին, հին օրերի պես հագնվում էր, կապում փողկապը, վերցնում լուսանկարչական սարքը և գնում մոտակա դպրոց: Թե ինչ էր գգում և ինչ վերնուշ էր սալրում նա, այդ մասին խոսում էին նրա արցունքներն ու արված կարգերը:

Այսպես արդեն 20 տարի: Նա՝ երկարամյա մանկավարժ, մաթեմատիկայի ճանաչված մասնագետ Նորայր Թևոսյանը, այս անգամ մայիսի 25-ին Ռոստովում երկար տարիներ դպրոցի տնօրեն աշխատելուց հետո, ճակատագրի բերումով հայտնվել էր Ռոստովում: Նա ամեն սեպտեմբերի 1-ին և մայիսի 25-ին, հին օրերի պես հագնվում էր, կապում փողկապը, վերցնում լուսանկարչական սարքը և գնում մոտակա դպրոց: Թե ինչ էր գգում և ինչ վերնուշ էր սալրում նա, այդ մասին խոսում էին նրա արցունքներն ու արված կարգերը:

Նրանց մեջ մեկը իր հուշերի հետ էր, իր սաների հետ, որոնք ով գիտի, հիմա աշխարհի որ խայտոլիներում են տխրում ու կարտում, գուցե և հիշում իրենց վերջին գանգը, իրենց խիստ ու բարի ուսուցչին: Գուցե...

- Տարիներ անց, երբ նա տուն կառուցելու հնարավորություն ունեցավ Ռոստովում, ընտրեց այն բարձունքը, որն ուղիղ դպրոցին

- Բարի երթ, սիրելի շրջանավարտներ: Աշխարհի որ ծայրում էլ լինենք, ինչ ազգի էլ պատկանենք, մի կարևոր առաքելություն պիտի ունենանք բոլորս. այս մոլորակը դարձնել էլ ավելի լավը խաղաղ ու անվտանգ:

Բարի երթ նաև ձեզ, իմ սիրելի հայ շրջանավարտներ, շնորհավոր ձեր սուտըր մեծ կյանք,



Մայիսի 25-ին վերջին գանգ հինգեց նաև թիվ 83 դպրոցի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի սաների համար: Նմանակի երեխաներն իրենց ուսուցչուհու և ծնողներին հետ:


քաղաքի թիվ 83 դպրոցում էր, ուր գեղեցիկ հանդիսություն էր՝ վերջին գանգ: Դպրոցի բակը լցված էր երգ ու ծիծաղով, ծափ ու ծաղիկներով, արցունքներով ու ուրախությամբ:

Եր նայում: Եվ այսօր նա դպրոցի անցուղարձի ամենօրյա մասնակիցն ու լավ սովորող թոռնիկների ուսուցիչ պապիկն է: Եվ նա իր ողջույնի խոսքն է հղում վերջին գանգի բոլոր գլխավոր հերոսներին:

ուզում եմ հավատալ ու հիշեցնել, որ մենք՝ աշխարհի բոլոր հայերս, հանդիպման մեկ հասցե ունենք՝ մայր հայրենիք և հաղորդակցման մեկ լեզու՝ մայրենի:

Մոնա ԿԱՐՈՂԵՏՅԱՆ, լրագրող

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Նրա հերոսը կարոտն է: Կորուստը հայրենիքի, հարազատների, մտերիմների նկատմամբ, որը նրա բանաստեղծական հոգին պիտի ավելի խորությամբ զգար ու ապրեր օտարության մեջ:

Անաստաս Մաֆարի Հակոբյանը ծնվել է 1961 թվականի փետրվարի 16-ին Հայաստանի Հանրապետության Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիր) շրջանի Խանջյան գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո 1976 թվականին ընդունվել է Հոկտեմբերյանի տեխնոլոգիական տեխնիկումի շինարարական բաժինը: 1980 թվականին, գերազանցությամբ ավարտելով այն, ընդունվել է Դոնի Ռոստովի ինժեներաշինարարական ինստիտուտի Գյուղական շինարարության բաժինը (ՔՄՍԻ): 1985 թվականին, ավարտելով ինստիտուտը, գործուղվել է Ալթայի երկրամաս և այնտեղ երեք տարի աշխատել իր մասնագիտությամբ:

1988 թվականին նա վերադարձել է Հայաստան և աշխատել Բաղրամյանի շրջանի վիճակագրական վարչությունում՝ որպես տնտեսագետ: Սակայն, հանգամանքների բերումով, կրկին վերադարձել է Դոնի Ռոստով և մինչև այժմ ապրում և աշխատում է այստեղ:

Բանաստեղծություններ սկսել է գրել դեռ դպրոցական տարիներին: Սակայն

19 տարեկան հասակում նա այրել է իր բոլոր ստեղծագործությունները: Պատճառ է հանդիսացել մի հասարակ դիպված: Մի օր, օրացույցից պոկելով հերթական թերթը, հակառակ էջի վրա նա կարդացել է մի բանաստեղծություն, որի հեղինակն եղել է ոչ թե մարդն, այլ՝ համակարգիչը: Դրա համար նա շատ է հիասթափվել: Երկար տարիներ դադարել է ստեղծագործել:

Նորից սկսել է գրել արդեն հասուն տարիքում, երբ չգրել այլևս չի կարողացել: Նրա բանաստեղծությունները տպագրվել են Դոնի Ռոստովի «Նոր դար», «Դոնի Նախիջևան» հայկական թերթերում, ինչպես նաև Հայաստանի Արմավիրի «Հայրենական» թերթում: Մի քանի բանաստեղծություններ՝ ռուսերեն թարգմանությամբ, տպագրվել են Ռոստովի մարզի այլ թերթերում և Դոնի բանաստեղծների «Вечерние автографы» բանաստեղծությունների ժողովածուում:

«Կարոտը» հեղինակի առաջին ժողովածուն է: Անաստաս Հակոբյանի հերոսը սերն է հայրենիքի, հարազատների, մտերիմների նկատմամբ, հայրենի հողի անհաս կարոտը, բնության գեղեցիկ երևույթները, հայրենիքում և օտար ափերում ապրած կյանքը, ճշմարտությունը և խաբեությունը, բոլոր այն նկատելի ու աննկատ երևույթները, որ որսացել է հեղինակի խորաթափանց հայացքը:

ՄԱՍՏՍԱՍ ՀԱՎՈՐՅԱՆ

ԿՄԱՐՈՑ

Книгу можно приобрести в армянских церквях Дона и армянской общине Ростова-на-Дону. Обращаться по тел.: 8 960 458 99 73

ԿԱՐՈՑ

Երևա՞ն – Ռոստով՞, Ռոստով՞ – Երևա՞ն...

Այս քաղաքների միջև մի կամար Բնքնաթիռները կապեցին կարծես, Ռը հետագայում շատերի համար Դարձավ վառ փարոս ծիածանի պես:

Ճանապարհները հերթով փակվեցին, Հին երկաթուղին դարձավ հուշարձան, ճակատագրերն էլ մարդկանց կապվեցին Երկնային ուղուց անտես ու անձայն:

Մյու կամարաձև ուղին լուսաբեր Մագնիս է դարձել երկնակամարում, Երկու կողմերից մարդկանց ձգում վեր, Իր մեծ ուղեծրով տանում է, բերում:

Իսկ տարիները թռան ու անցան՝ Բնքնաթիռներից ետ չմնալով, Ուղևորներն էլ արդեն ծերացան՝ Նույն ուղեծրով միշտ գնալ ու գալով:

Երկու կողմերում մարդիկ են խմբված՝ Ճանապարհորդներ, դիմավորողներ, Իսկ նրանց միջև հոգնած ու տանջված Թռիչքի պատրաստ շատ ուղևորներ:

Երբ նրանց դեմքերին դրոշմված են միշտ Ծիծաղ և արցունք, թախիծ ու կարոտ: Հատկապես կարոտ, անսահման կարոտ Հարազատ մարդկանց ձգող իրար մոտ:

Այդ զգացմունքը նման է գինու Կամ էլ հայկական ընտիր կոնյակի, Եթե երկար է այն փակված մնում, Վերածվում է սիրտ այրող կրակի:

Կարոտն այնքա՞ն է հաճախ խտանում, Տարիների հետ այնքա՞ն գորտնում, Որ ծեր մարդկանց է այն ոտքի հանում, Հենափայտերով թռիչքի տանում:

Կարոտն այնքա՞ն է հաճախ խորանում, Որ օդանավում թռիչքի պահին Քեզ թվում է, թե դանդաղ է գնում Այդ երկնասլաց տաքսին օդային:

Եվ դու մտովի թռչում ես արագ, Ինքնաթիռից շուտ վայրէջք կատարում, Հարազատներդ ես գրկում անհագ Եվ նրանց գրկում կարոտդ մարում:

Ռոստով՞ – Երևա՞ն, Երևա՞ն – Ռոստով՞... Ռոքան շատ են այս ուղերթով թռչում Երկու կողմերից շտապ, անհամբեր, Ճակատագիրն է նրանց ետ կանչում Ճանապարհներով ամենատարբեր:

Ընտանիքներ են թռչում միասին Կամ էլ առանձին, իրարից գատ-գատ Քույր ու եղբայրներ, կին և ամուսին, Մանուկ, տատ ու պապ, ծանոթ, հարազատ:

Վերջին տեսության են թռչում ումանք Հարազատի մոտ կամ էլ ծնողի,

Որ իրենց համար չեն խնայել կյանք, Բայց շուտով պետք է տրվեն մայր հողին:

Բազմապատկվում է վիշտն անտանելի Հեռվից ու շագամ այն դժբախտ մարդկանց, Որ կարոտով լի դեմքը սիրելի Շիրմաքարին են տեսնում քանդակված:

Գերեզմանի թարմ ծաղիկների մեջ Առատ արցունքն է հոսում, իջնում ցած, Որպեսզի մարի կարոտը անշեջ Նրանց սրտերում վաղուց կուտակված:

Ուրախ, հաճելի առիթներ էլ կան. Հավաքույթ, խնջույք կամ էլ հարսանիք, Որ պետք է թռչել և լինել ներկա, Հարազատներին տեսնել երջանիկ:

Ողջ ընտանիքով ուրախ մտնել տուն. Մեծ սեղանի շուրջ նստել տոնական, Բաժակաճառեր լսել իմաստուն, Երգով ու պարով հրճվել հայկական:

Ազգականներին գրկել, պար բռնել, Երգել ու պարել, թե սխալ, թե ճիշտ, Գենացներ խմել, թեկուզ և հարբել Մի պահ մոռացած այն ցավ ու վիշտ:

Երջանիկ պահերն այդ միասնական Նկարահանել և պահել երկար Տեսաժպտվեն այդ ընտանեկան, Որպես թանկագին մի կիսնակար:

Որպեսզի հեռվում, տարիներ հետո, Երբ դու կտանջվես այրող կարոտից, Կարող երբ բոլոր պատես հերթով, Ցնցող պահերն այդ վերապրես նորից:

Հեռուստացույցին աչքերդ հառած Ուրախ և զվարթ բոլորին տեսնես, Խնջույքի պահին զուգված, զարդարված, Որպես մասնակից և հանդիսատես:

Երբ հարսանիքը է կրանին նորից Չես համակերպվում այն պարզ մտքի հետ, Որ ումանք չկան մասնակիցներից՝ Քաղցր հուշեր են դարձել առհավետ:

Մահմոռանալի պահերն անցյալի Անփոփոխ մնում տարիներ երկար, Կարող երբ բոլոր պատես հերթով, Կարոտ սրտերի համար օգտակար:

Սակայն, երբ դա էլ չի օգնում արդեն Եվ չի փարատում կարոտը բնավ, Նորից հառնում է մեր աչքերի դեմ Հայրենիք տանող մի մեծ օդանավ:

Կարոտն է կապում երկնային կամար, Դա միակ էլքն է բոլորիս համար, Քանի դեռ փակ է հին երկաթուղին...